

## **Համաձայնության սահմանում**

Համաձայնությունը սահմանվում է որպես գիտակցված, ինքնակամ և բոլոր մասնակիցների միջև փոխահամաձայնեցված որոշում՝ մասնակցելու սեքսուալ բնույթի գործողությունների: Համաձայնությունը կարող է տրվել խոսքի կամ գործողությունների միջոցով, եթե դրանք հանդիսանում են սեքսուալ բնույթի գործողություններին մասնակցելու պատրաստակամության հստակ արտահայտում: Լռությունը կամ դիմադրության բացակայությունը, որպես այդպիսիք, չեն կարող դիտարկվել որպես համաձայնություն: Համաձայնության սահմանումը կախված չէ մասնակցի սեռից, սեռական կողմնորոշումից, գենդերային պատկանելությունից կամ ինքնարտահայտումից:

Ցանկացած տիպի սեռական ակտին կամ մեկ այլ մասնակցի կամ մասնակիցների հետ սեռական ակտին նախորդող փոխահամաձայնեցված գործողություններին մասնակցության համաձայնությունը չի կարող պարտադիր կերպով դիտարկվել որպես մեկ այլ սեռական ակտին մասնակցության համաձայնություն:

Համաձայնությունը հանդիսանում է պարտադիր պայման՝ անկախ ակտը նախաձեռնող մասնակցի ոգելից խմիչքների և/կամ թմրանյութերի ազդեցության տակ գտնվելու փաստից:

Ի սկզբանե տրված համաձայնությունը կարող է ցանկացած պահի չեղարկվել:

Համաձայնությունը չի կարող տրվել երբ անձը գտնվում է անկարողունակ վիճակում, այսինքն՝ գուրկ է գիտակցաբար ընտրելու կարողությունից՝ մասնակցել սեռական գործողությունների: Անկարողունակության պատճառ կարող է հանդիսանալ անգիտակից կամ քնած վիճակը, անձի նկատմամբ բռնության կիրառումը կամ այլ հանգամանք, որի պատճառով անձը չի կարող տալ իր համաձայնությունը: Կախված թունավորվածության աստիճանից՝ ոգելից խմիչքի, թմրանյութերի կամ այլ հարբեցուցիչների ազդեցության տակ գտնվող անձը կարող է համարվել անկարողունակ և, հետևաբար, անկարող՝ տալու համաձայնություն:

Համաձայնությունը չի կարող տրվել հարկադրանքի, ահաբեկման, ուժի կիրառման կամ վնասի հասցման սպառնալիքի ներքո:

Եթե համաձայնությունը չեղարկվել է կամ այն այլևս չի կարող տրվել, ապա սեռական գործողությունները պետք է անմիջապես դադարեցվեն:

## **Ազատում ոգելից խմիչքների կամ թմրանյութերի օգտագործման պատասխանատվությունից**

Rockland Community College-ի ցանկացած ուսանողի առողջությունը և անվտանգությունը չափազանց կարևոր են: RCC-ն ընդունում է, որ բռնության, այդ թվում՝ սակայն չսահմանափակվելով, ընտանեկան, ժամադրությունների ընթացքում կիրառվող բռնության, հետապնդման կամ սեռական բռնության ժամանակ ոգելից խմիչքներ և/կամ թմրանյութեր (ինքնակամ կամ կամքին հակառակ) օգտագործող ուսանողները կարող են խուսափել նմանօրինակ դեպքերի մասին բարձրաձայնելուց՝ վախենալով իրենց վարքի հետ կապված

պոտենցիալ հետևանքներից: RCC-ը լրջորեն խրախուսում է ուսանողներին ընտանեկան, ժամադրությունների ընթացքում կիրառվող, հետապնդման կամ սեռական բռնության միջադեպերի մասին հայտնել հաստատության պատասխանատու մարմիններին: Ընտանեկան, ժամադրության ընթացքում կիրառված, հետապնդման կամ սեռական բռնության միջադեպերի մասին օրենսդիր մարմիններին կամ RCC –ի պատասխանատուներին հայտնող բարեխիղճ անձիք կամ ականատես անձինք չեն կրի պատասխանատվություն ընտանեկան, ժամադրության ընթացքում կիրառված, հետապնդման կամ սեռական բռնության ժամանակ ոգելից խմիչքների և/կամ թմրանյութերի օգտագործման վերաբերյալ RCC's-ի կողմից սահմանված քաղաքականությունների խախտման համար:

## **Ուսանողական օրենսդրություն**

Բոլոր ուսանողները իրավունք ունեն՝

բողոք ներկայացնելու տեղական իրավապահ և/կամ պետական ոստիկանության մարմիններին;

ակնկալելու ընտանեկան, ժամադրության ընթացքում կիրառված, հետապնդման կամ սեռական բռնության դեպքերի բացահայտումների վերաբերյալ հետևողական վերաբերմունք;

կայացնելու որոշում՝ բարձրաձայնել կամ չբարձրաձայնել հանցագործության կամ բռնության մասին և մասնակցել դատական կամ վարույթի գործընթացին և/կամ քրեական արդարադատության գործընթացին՝ զերծ հաստատության ճնշումից;

մասնակցել արդար, անկողմնակալ դատական գործընթացներին, որոնք տրամադրում են համարժեք ծանուցում և լսելի լինելու կարևոր հնարավորություն

ակնկալել արժանապատիվ վերաբերմունք և օգտվել հաստատության կողմից քաղաքակիրթ, արդարացի և հարգալից կերպով մատուցվող ծառայություններից, ըստ անհրաժեշտության

զերծ մնալ ցանկացած առաջարկությունից, որ բողոք հաղորդող անհատը մեղավոր է այս հանցանքների ու բռնությունների կատարման համար, կամ պետք է վարվեր այլ կերպ՝ խուսափելու նման հանցանքներից կամ բռնություններից;

միջադեպը նկարագրել հնարավորինս քիչ թվով ինստիտուցիոնալ ներկայացուցիչների, որպես գործնականում իրագործելի, և ստիպված չլինել անհարկի կրկնել միջադեպի նկարագրությունը;

հաստատության իրավասության շրջանակում պաշտպանված լինել հաստատության, ցանկացած ուսանողի, մեղադրվող և/կամ պատասխանող կողմի, և/կամ նրանց ընկերների, ընտանիքի անդամների և մտերիմների հաշվեհարդարից;

հնարավորություն ունենալ առնվազն մեկ աստիճան բողոքարկման դատավճռի;

իրենց ընտրությամբ ունենալ խորհրդատու, ով կարող է աջակցություն կամ խորհրդատվություն տրամադրել բողոք հաղորդող անձին, մեղադրյալին կամ

պատասխանողին, դատական կամ վարքի նորմերի խախտման հետ կապված գործընթացում, այդ թվում՝ այդ գործընթացին առնչվող բոլոր հանդիպումների և լսումների ժամանակ.

օգտվել իրենց քաղաքացիական իրավունքներից և դավանանքի ազատությունից, գերծ մնալով հաստատության հետաքննիչ, քրեակատարողական, դատական կամ ուսանողների վարքի նորմերի խախտման հետ կապված գործընթացի միջամտությունից.

Նշված իրավունքները գործում են անկախ ռասայական կամ ազգային պատկանելությունից, մաշկի գույնից, դավանանքից, հավատքից, տարիքից, հաշմանդամության փաստից, սեռից, գենդերային պատկանելությունից կամ ինքնարտահայտումից, սեռական կողմնորոշումից, ընտանեկան կարգավիճակից, հղիության փաստից, նախատրամադրություն ենթադրող գենետիկական հատկանիշներից, ռազմական կարգավիճակից, ընտանեկան բռնության զոհ հանդիսանալու կամ քրեական դատվածություն ունենալու փաստից, ինչպես նաև հանցանքի կամ բռնության տեղի ունենալու վայրից՝ լինի դա կամպուսի տարածքում, տարածքից դուրս կամ արտերկրում կրթություն ստանալու ընթացքում:

Դուք իրավունք ունեք բողոք հաղորդելուց համալսարանի ոստիկանությանը կամ Կամպուսի անվտանգության ծառայությանը, տեղական իրավապահ մարմիններին և/կամ պետական ոստիկանության մարմիններին, կամ գերծ մնալ հաղորդելուց; հաղորդել միջադեպի մասին ձեր հաստատությանը; հաստատության կողմից պաշտպանված լինել հնարավոր հաշվեհարդարից միջադեպի վերաբերյալ հաղորդելու համար; և հաստատությունից ստանալ անհրաժեշտ աջակցություն և ռեսուրսներ: